Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Հոռոմի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

տնօրենի 2026 թվականի մարտի 30-ի N 22-Ա հրամանի

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Հոռոմի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի երաժշտության դաստիարակի թափուր հաստիքը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին

| | Թափուր հաստիքի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը(նյութերը) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հոռոմի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի երաժշտության դաստիարակի 0.75 դրույք)** | **Որակավորման պահանջները՝ նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակի հաստիքը զբաղեցնողը պետք է ունենա՝** միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն<br><br>**Ընդհանուր պահանջները՝**<br>**Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝**<br>տիրապետի երաժշտական գործիքի (դաշնամուր) կատարման տեխնիկային, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝**<br>դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը. | 1)դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br>ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Կրթության մասին», «Հանրակրթության մասին», Նախադպրոցական կրթության մասին», «Լեզվի մասին», Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգիրքը», Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br>բ. Նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական դաստիարակության և ուսուցման տեսության և մեթոդիկայի հիմունքները: | դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | ներկայացնում են նաև զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):<br>**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Հոռոմ, 10-րդ փող, 16 մանկապարտեզ օրը՝ 2026 ապրիլի 29-ին, ժամը 11:00:** | **Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Հոռոմի մանկապարտեզ>> ՀՈԱԿ Հեռ.՝098928790: Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբեր 2024 թվական N 1981-Ա/2 հրաման):**<br><br>**Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 9:00-17:30, բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային օրերից:** | | **2026 թվականի ապրիլի 23-ը ներառյալ:** |